ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սկզբնական շրջանում, երբ աշակերտները նոր են սկսում ուսումնասիրել օտար լեզուն, ուսուցիչը չպետք է գանգատվի նրանց մոտ հետաքրքրության բացակայությունից: Աշակերտներն անտարբեր չեն լինում ուսումնական գործընթացի գրավչության, առարկայի նորության նկատմամբ: Ուսուցչի հիմնական պահանջն ու նպատակն է հասնել նրան, որպեսզի այդ հետաքրքրությունները լինեն մշտակայուն:

Առարկայի յուրահատկությունը աշակերտներից պահանջում է ծանրաբեռնված մտավոր գործունեություն, ուշադրություն, տարբեր հասկացությունների ընկալման կարողություններ, ընդհանրացումներ կատարելու հմտություններ: Ոչ բոլոր աշակերտների մոտ է օտար լեզուն ընկալվում դյուրին: Կան աշակերտներ, որ դժվարությամբ են յուրացնում արտասանությունը, չեն հիշում խոսքային ձևերի կառուցվածքները, դրանց հարստացմանը նպաստող բառերը: Դա, որպես կանոն, ստեղծում է անբավարարություն, կասկած իր ուժերի վրա, որը բերում է օտար լեզվի հետագա ուսուցման հետաքրքրության նվազման: Ցանկացած առարկայի ուսուցման ընթացքում հետաքրքրությունը հանդիսանում է շարժիչ ուժ, որն ապահովում է գիտելիքի բարձր որակ և աշակերտների կողմից անհրաժեշտ հմտությունների և կարողությունների տիրապետում: Այդ իսկ պատճառով, ուսուցիչները պետք է ջանք չխնայեն, որպեսզի գտնեն օտար լեզու առարկայի նկատմամբ հետաքրքրությունների զարգացման նորանոր ուղիներ:

Այդ ուղիներից էլ, որը բերում է ուսուցանվող լեզվի նկատմամբ հետաքրքրությունների ակտիվացմանը, հանդիսանում են դասի ոչ ավանդական ձևերը: Դասի այդպիսի ձևերը օգտագործվում են ամփոփիչ դասերի ժամանակ, երբ աշակերտներն արդեն ունեն անհրաժեշտ բառապաշար և այդ թեմայի վերաբերյալ ստացել են համապատասխան ինֆորմացիա: Ինչպես ցույց է տալիս աշխատանքի փորձը, երկրագիտական թեմատիկային վերաբերվող դասերը նպաստում են օտար լեզու առարկայի նկատմամբ պահպանելու հետաքրքրությունները, նրանց մոտ խոսքային հմտությունների և կարողությունների կատարելագործմանը՝ աշակերտներին հարստացնելով ուսումնասիրվող լեզվի երկրի մասին գիտելիքներով: Այդպիսի դասերի նախապատ-

բաստման ժամանակ կրկնվում է նախորդ տարիներին սովորած երկրագիտական նյութը. օգտագործվում են ուսումնասիրվող լեզվի երկրի մասին ինֆորմացիա պարունակող աղբյուրներ. կատարվում են միջառարկայական կապեր. ինչպես օրինակ. պատմություն առարկայից աշակերտները գիտեն 17-րդ դարի անգլիական բուրժուական հեղափոխության մասին. գրականությունից գրողների մասին. որոնք մեծ ներդրում են ունեցել անգլիական գրականության մեջ:

Այժմ մեծ տարածում ունի «կլոր սեղանի շուրջ» դասի ձևի կիրառումը: Դասերի բովանդակությունը կազմում են աշակերտներին հետաքրքրող թեմաներին ու հիմնախնդիրներին վերաբերվող երկխոսությունները: «Կլոր սեղանի շուրջ» երկխոսություն դասերը սովորաբար անց են կացվում թեմայի ավարտական փուլի աշխատանքների ժամանակ: Իր ձևով ոչ ավանդական «կլոր սեղանի շուրջ» դասը ուսումնական պարապմունք է և նրա հաջողությունը որոշվում է խնդիրների հստակ ձևակերպմամբ և լուծումով: Այդպիսի դասի պահանջն է աշակերտների երկխոսության և մենախոսության գործնական կիրառումը: Բայց կա մեկ ընդհանրություն. որը բնութագրական է այդ դասերի համար: Այդ դասերն ընդլայնում են աշակերտների աշխարհայացքը. զարգացնում են նրանց հետաքրքրությունները. մտածողական ակտիվությունն ու հաղորդակցական ընդունակությունները: «Կլոր սեղանի շուրջ» դասը կարող է իր մեջ ներառել հետաքրքրաշարժ իրադրություններ վիկտորինաներ. մրցույթներ:

Օտար լեզվի նկատմամբ հետաքրքրության պահպանման հիմնախնդիրն անհանգստացնում է բազմաթիվ ուսուցիչների: Փորձը ցույց է տալիս. որ արդյունավետ է օգտագործել աշխատանքի ակտիվ ձևեր անցկացնել գիտելիքների ստուգման դասեր. ստուգարքներ: Պրակտիկ գործունեությունը մեզ ապացուցում է. որ դասի բազմատեսակ ակտիվ ձևերը աշակերտների մոտ առաջացնում են հետաքրքրություններ. նպաստում են նրանց խոսքամտածողական կարողությունների ձևավորմանը. ճանաչողական ակտիվությանը. ձևավորում են ինքնուրույն աշխատելու հմտություններ:

Ինչպե՞ս դարձնել դասը հետաքրքիր. գրավիչ. հասնել նրան. որ այն ձևավորի ճանաչողական հետաքրքրություն. աշակերտների ստեղծագործական և մտածողական ակտիվություն: Դասի կազմակերպման բազմաթիվ հնարքներից աշակերտների մոտ հետաքրքրություն են ստեղծում խաղը և խաղային իրադրությունները. քանի որ դրանք խոսքային գործունեությունը մոտեցնում են կատարյալ նորմերի. նպաստում են զարգացնելու հաղորդակցական հմտու-

թյուններ, լեզվական նյութի արդյունավետ մշակմանը, ապահովում են ուսուցման գործնական ուղղվածությունը:

Դպրոցում օտար լեզվի ուսուցման պրակտիկայում դերային խաղերը առավել լայն տարածում են գտնում: Դերային խաղի հիմքում ընկած է աշակերտների համակարգված խոսքային հաղորդակցումը՝ ըստ նրանց միջև բաժանված դերերի և խաղային բովանդակության: Աշակերտների տարիքից կախված օգտագործվում են բազմաթիվ դերային խաղեր: Վաղ ձև է հանդիսանում հեքիաթային բովանդակություն ունեցող դերային խաղը: Հաջորդ ձևն է կենցաղային բովանդակությամբ դերային խաղը, որն արտացոլում է աշակերտի կյանքի տարբեր ոլորտները (ուսուցում,աշխատանք,ազատ ժամանակ), վերարտադրում նրա կյանքի փորձի իրական դրվագները: Դեռահասների բարձր դպրոցական տարիքի աստիճանական անցման պայմաններում համապատասխան խաղային ձև է դառնում նմանակող դերային խաղերը: Այդպիսի խաղում պահպանվում են նմանակող գործունեության կանոնները, հաղորդակցումը կազմակերպվում է խաղային առաջադրանքին համապատասխան, հաշվի են առնվում ճիշտ և սխալ տարբերակները, վերջում իմի են բերվում արդյունքները, որոշվում են հաղթողները, որոնք ավելի լավ էին կատարել առաջադրանքը: Նմանակող դերային խաղերը կարող են լինել ճանաչողական, աշխարհայեցողական բովանդակությամբ, ինչպես նաև կարող են լինել նմանակող գործարար խաղեր:

Ինչպես հայտնի է ուսուցանող խաղերը նպաստում են կարևոր մեթոդական առաջադրանքների կատարմանը.

- աշակերտների խոսքային հաղորդակցման հոգեբանական պատրաստվածության ստեղծում
- լեզվական նյութի բազմակի կրկնության անհրաժեշտության ապահովում
- խոսքային ճիշտ տարբերակի ընտրության վարժեցում

Խաղի ընթացքում լեզվական նյութը ամրապնդվում է աշակերտների համար գրավիչ ձևով: Խաղերը աշակերտների մոտ զարգացնում են հետևողականություն, կենդանություն են հաղորդում դասին, բարձրացնում են օտար լեզու սովորելու հետաքրքրությունը:

Ինչպե՞ս պահպանել աշակերտների օտար լեզվի հանդեպ ունեցած հետաքրքրությունը նրա ուսուցման ողջ ընթացքում: Այս հարցը վերջին տարիներին լրջորեն քննարկվում է մեթոդական գրականության մեջ:

Օտար լեզվի ուսուցման շարժառիթների պահպանմանը և զարգացմանը մեծապես նպաստում է դասի ժամանակ երկրագիտական տարրերի մատու-

ցումը: Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները հետաքրքրությամբ են վերաբերվում ուսուցանվող լեզվի երկրի մշակույթին, ավանդույթներին: Երկրագիտական տարրերով հարուստ դասերը հետագայում աշակերտների մոտ պահանջմունք են առաջացնում ինքնուրույն ծանոթանալու երկրագիտական նյութերի հետ:

Այսօր արդեն երկրագիտական բնույթի տեքստերը մեծ տեղ են գրավում օտար լեզուների ուսուցման գործընթացում: Այդ տեքստերի շնորհիվ աշակերտները ծանոթանում են ուսուցանվող լեզվի երկրի առանձնահատկությունների հետ, լրացուցիչ գիտելիքներ են ստանում աշխարհագրության, կրթության, մշակույթային բնագավառների մասին: Մինչ երկրագիտական տեքստի հետ աշխատելը, անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել հիմնական հասկացությունների վրա:

Կարելի է օգտագործել նաև կերպարվեստի համադրման հնարքը: Համադրումը ուսուցման տեսողական միջոց է, մեթոդական հնարք, որը նախատեսում է ինչ-որ հիմնական հասկացության հաջորդական ցուցադրում, որն այդպես ստեղծում է ուսումնասիրվող հասկացության տեսողական, իմաստային և կառուցվածքային պատկեր: Իր ձևով համադրումը հիշեցնում է ցուցանակ կամ պատի թերթ: Ուշադրության կենտրոնում գտնվում է հիմնական հասկացությունը կորիզը, իսկ դրա շուրջ տեղավորվում են հասկացություններ, որոնք ստեղծում են նրա շրջապատը: Երկրագիտական նյութերի ցուցադրումը կատարվում է ոչ սովորական ձևով, իսկ դա գրավում է աշակերտների ուշադրությունը, ընդլայնում նրանց ճանաչողական հետաքրքրությունները, ստեղծում է դրական շարժառիթ:

Ուսուցչի համար կարևոր խնդիր է պահպանել օտար լեզվի ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը: Այդ խնդրի լուծման համար ուսուցման գործընթացում պետք է օգտագործել տարբեր տեսակի օժանդակ նյութեր՝ նկարներ, նշաններ, գծագրեր: Կարելի է օգտագործել նաև երկխոսություններ: Ցածր դասարաններում երկխոսությունները կարելի է մատուցել հայերենի հետ համատեղ: Երկխոսությունների ժամանակ անհրաժեշտ է օգտագործել լրացուցիչ ինֆորմացիա, որը նպաստում է աշակերտների կողմից ավելի շատ նոր բառերի յուրացմանը և բարձրացնում է աշակերտների օտար լեզու առարկայի նկատմամբ հետաքրքրությունը:

Օտար լեզվի ուսուցման գործընթացում ճանաչողական ուղղվածության և հետաքրքրության պահպանման կարևորագույն եղանակներից է հանդիսանում ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործումը: Օտար լեզվի ուսուցման

գործընթացում ուսուցման տեխնիկական միջոցների հաճախակի օգտագործումը թույլ է տալիս լուծելու հետևյալ խնդիրները.

- արհեստական լեզվական միջավայր ստեղծելու եղանակով բարձրացնել օտար լեզվի ուսուցման գործնական մակարդակը
- բարձրացնել աշակերտների ճանաչողական մակարդակը
- անհրաժեշտ մակարդակի վրա պահպանել աշակերտների օտար լեզվի ուսուցման հետաքրքրությունը
- ապահովել ուսուցման արդյունավետությունը և արդյունքների կայունությունը

Աշակերտների զգացմունքների վրա ազդելու արդյունավետ եղանակներից մեկն էլ հանդիսանում է երաժշտությունը, որն իրենից ներկայացնում է հոգեկան ուժեղ դրդապատճառ՝ ներխուժելով մարդու հոգու գաղտնի խորքերը: Հայտնի մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին գրում է, որ նա ով չգիտի երաժշտություն, նմանվում է անգրագետ մարդու: Երաժշտությունն ու երգեցողությունը անգնահատելի օգնություն են ցուցաբերում օտար լեզվի ուսուցման գործընթացին:

Հայտնի է, որ յուրաքանչյուր դաս ունի իր բովանդակային, մեթոդաբանական և հոգեբանական կողմը: Լեզվական նյութի մատուցումը կատարվում է մեթոդաբանական հնարքների օգնությամբ, որոնք զգալիորեն կապված են հոգեբանական կողմի հետ: Հոգեբանական կողմը հաճախ հանդիսանում է գլխավոր և դասի զգացմունքային մթնոլորտը որոշում է ուսուցման արդյունքը: Անպայմանորեն պետք է հաշվի առնվի դասարանում աշակերտների փոխհարաբերությունները միմյանց հետ, աշակերտների և ուսուցիչների փոխհարաբերությունները, ինչպես նաև այն օբյեկտիվ պայմանները, որտեղ անց է կացվում դասը: Մանկավարժներից շատերը համաձայնվում են, որ դասարան մտնելով, ուսուցիչը պետք է դռան հետևում թողնի իր վատ տրամադրությունը: Թվում է թե, բարեհամբույր ժպիտը, ուրախ տեսքը, գեղեցիկ արտաքինը գլխավորը չէ, սակայն անհրաժեշտ նախապայման է, որը մենք փորձում ենք օգտագործել խոսքային հաղորդակցության հիմքեր ստեղծելու համար:

Ինչպես հայտնի է, դպրոցական պրակտիկայում գոյություն ունի այն տեսակետը, որ երեխաների առողջությունը միայն բժշկների խնդիրն է հանդիսանում: Սակայն, սոցիոլոգների կարծիքով մարդու առողջությունը բժշկությունից կախված է միայն 20%-ով, մեծ մասամբ այն կախված է առողջության և առողջ ապրելակերպի գործոններից:

Բժիշկների կարծիքով, այսօր, դասի գլխավոր պահանջներից է համարվում դասի դինամիկ և ստատիկ մասերի փոխադարձ կապի հասարակական պահանջը: Օտար լեզվի դասը իր բնույթով թույլ է տալիս իրականացնել այդ

պահանջը: Այնպիսի հնարքները. ինչպիսիք են ֆիզկուլտուրան. երգեցողությունը. տարբեր տեսակի խաղերը. որոնք ուղորդվում են շարժումներով. թույլ են տալիս նախազգուշանալու ֆիզիկական հոգնածության զարգացումից: Խոսքային գործունեության ձևերի փոփոխման անհրաժեշտությունը հանդիսանում է ուսուցման արդյունավետության պայման և նպաստում է աշակերտների հիգիենիկ դաստիարակությանը:

Ուսուցման և դաստիարակության հաջողությունը ապահովվում է ոչ միայն ուսումնամեթոդական համակարգերի մեջ դրված մեթոդական տարրերի հաջորդականությամբ. այլ նրանց մատուցման ստեղծագործական մոտեցմամբ, որը հետագայում թույլ է տալիս աշակերտների մոտ ձևավորել սովորելու պահանջմունք, արդյունավետ աշխատելու հմտություն. զարգացնել նրանց մտավոր կարողությունները. խոսքային ակտիվությունը. ցուցաբերել ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույնություն:

Գրականության ցանկ

1. Зимняя И.А. Психология обучения иностранного языка в школе. - М., Просвещение, 1991г.
2. Пидкасистый П. И. Самостоятельная познавательная деятельность школьников в обучении. - М., 1980 г.
3. Талызина Н. Ф. Формирование познавательной деятельности младших школьников - М., 1988 г.